


անցկացնում, ակամայ դալիս է այն համոզման, որ այդ ժամանակ-
ներում գոյութիւն է ունեցել հիւանդոտ հրատարակչացաւ, որով
վարակուած էին շատ շատերը:

Յիշուած թուականներում օդն այնպէս վարակուած էր գա-
նազան հիւանդութիւններով, որ մի առ մի թուել անհնարին է,
վերցնենք հենց գործադուլները. Ռուսաստանում այնպիսի լայն
ծաւալ էին ստացել գործադուլները որ ոչ մի կասկած չէր մնում,
որ մենք գործ ունենք վարակիչ հիւանդագին սովորութեան հետ.
գործադուլ էին անում բանուորները, գործադուլ էին անուն ար-
հեստաւորները, խանութի ծառայողները, աղախիւնները, ծառաները
քաղաքացիները, բանուորները, դասագուլ էին անում համալսարան-
ները, գիմնազիաները, բէլալական և թեմական դպրանոցները, ծը-
խական դպրոցները, աշակերտներն ու ուսուցիչները և այս բոլորը
դիտելուց յետոյ դալիս ենք այն համոզման, որ այս դատագործա-
դուլները կուրօրէն նմանուելու հիւանդ երեոյթ էին, որ մի որոշ ժա-
մանակ համաճարակելով դադարեց:

Նոյն հիւանդ ոգին դրութեան կատեգորիային է պատկանում
նաև Հայ-թուրքական ընդհարումը, որ մի ամբողջ տարի տևելով
աւիրեց երկիրը դժբաղդացնելով շատ ընտանիքներ....



ՆԱԾԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ.

Սիրելի Սուրէն,

Ես արդէն սկսել էի իմ բարոյագիտական նամակա-
շարունակել խղճի մասին, բայց քո նամակը եկաւ հիմն ի
վեր փոխելու իմ մտադրութիւնը և մի առ ժամանակ մի
կողմ թողնելով խղճի մասին գրելս, պիտի խօսեմ քեզ
հետ կենսական նշանակութիւն ունեցող հարցերի մասին:

Քո նամակում դու յուսահատական նշաններ ես ցոյց
տալիս. գանգատում ես գիւղական կեանքի չափազանց
տաղաուկ և միակերպ լինելուց. գիւղացու անծայր եսասի-
րութիւնից:

Եթէ դու յիշում ես, ես հէնց իմ առաջին նամակում

քեզ յիշեցրի գիւղական կեանքի պարզութիւնն ու միակերպութիւնը. գիւղացու աշխարհահայեցողութեան տարբերութիւնը քոնից և յորդորեցի համբերութեամբ և յամուհաստատակամութեամբ առաջ տանել գործդ. եթէ գիւղացիք ամեն բան շուտ ըմբռնէին, լաւ բանը իսկոյն իւրացնէին և բարի խորհուրդները անմիջապէս գործադրէին, այն ժամանակ ուսուցչի արժէքը այնքան բարձր և վեհ չէր լինիր. Ուսուցիչը հէնց նրա համար պաշտելի է, որ ամեն տեսակ նիւթական և բարոյական զրկանքներ կրելով է տարածում լոյսը խաւարի մէջ, մեծ արգելքների յաղթահարելով է կարողանում կուլտուրայէս բարձրացնել այն ժողովրդին, որի մէջ գործելու կոչուած է:

Ուրեմն դու չպէտք է յուսահատուես, չպէտք է վրշտանաս, այլ ամենայն համբերութեամբ մի անգամ քեզ համար գծած նպատակին անշեղ դիմես և անշուշտ մի օր քո բոլոր չարչարանքները պսակուած կտեսնես:

Այս նաժակով ես կամենում եմ այդ մասին խօսել:

Իւրաքանչիւր ազգ բնազդաբար և գիտակցաբար ձգտում է բարեբաստիկ կեանքի, գոյութեան կուում նուաճելով իր համար այնպիսի մի դիրք, որ իբրեւ մարդկութեան մի հատուած, իրաւունք ունի գրաւելու իսկ այնպիսի անդորր կեանքի կարելի է հասնել այն ժամանակ, երբ բազմակողմանի գիտութիւններ, կուլտուրական բազմազան ձեռնարկներ ներմուծում են ազգի լայն խաւերի մէջ ու նրան տալիս են նիւթական ապահովութիւն. բայց միայն գրանով չի վերջանում ամեն բան, այլ անհրաժեշտ է, որ նիւթական բարօրութեան հետ զուգընթաց զարգանայ այդ ազգի բարոյական կողմը. Առանց բարոյականի, ազգերը չեն կարող յարատեւել և պատմութիւնը մեղ տալիս է շատ խրատական օրինակներ. ո՞ր է հին Հռոմի, Յունաստանի, Պարսկաստանի, Ասորեստանի և այլն փառապանծ թագաւորութիւնը, գոցանից մի մասը իսպառանհետացաւ, իսկ միւս մասը՝ հաղիւ ապրում է: Այդ մի ժամանակ նշանաւոր թագաւորութիւնների անկումը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ յղփացած կեանքի

նիւթական բարօրութեամբ, անտես արին բարոյական կողմը, ընկան զեղխութեան և անառակութեան մէջ և բարոյական յենարանը կորցնելով, կորցրին նաև իրանց նիւթական փառքը:

Արդ, մեր նպատակն է լինելու հայ ժողովրդի բարոյական և անտեսական դրութիւնը բարձրացնել և այդ պատճառով ես անչափ ուրախ եմ լինում, երբ լսում եմ, որ մեր ինտելիգէնտ ուժերը որոշ զոհողութիւն յանձն առնելով գնում են գաւառները, բայց ցաւալին այն է, որ գաւառ գնացող մեր երիտասարդները շնորհիւ իրանց անխորձութեան և երիտասարդներին յատուկ աճապարանքի, ուզում են ամեն բան իսկոյն իրագործել և իրանց աչքով տեսնել այն պտուղը, որի կորիզը նոր են դցել հողի մէջ, բայց որովհետեւ բնութեան մէջ աճապարանքը անհանդուրժելի է, որովհետեւ ամեն բան ժամանակի ընթացքումն է կատարւում, սերմը մի օրում չի աճում և պտուղ տալիս, այլ աստիճանաբար զարգանալով, իսկ եթէ կամենանք ժամանակից առաջ պտղաբեր դարձնել մենք միայն տունիւր կշորացնենք, այդպէս էլ մարդկանց նիստուկացը, սովորութիւնները, անտեսական դրութիւնը, մտաւոր զարգացումն և այլն ժամանակի և այն երկար, սերունդներ տեղ ժամանակի ընթացքում միայն կարելի է բարեփոխել, ուստի ամեն մի հասարակական դործիչ պիտի զինուի համբերութեամբ և միայն համբերութեամբ, այլապէս նպատակի չի հասնիլ:

Մարդկանց դործնական կեանքի բոլոր պահանջներին բաւականութիւն տուողը և գլխաւոր աղբիւրը հանդիսանում է կրթութիւն-դաստիարակութիւնը, որը տանում է ժողովրդին դէպի կատարելութիւն և որը բոլոր ազգերի կենսական, ստեղծագործական ուժն է կազմում:

Մեզ նման մի ազգ, որ շատ բաներով անկազմակերպ է, (եւ յոյս ունեւ, որ դու շովինիստ չես և հայ ժողովրդին չես համարում արդէն կազմակերպուած մի ազգ միայն նրա համար, որ մի քանի հազար տարուայ գոյութիւն ունի) կարօտ է բազմակողմանի զարգացման, իսկ մեր

կրթական-դաստիարակչական գործը կարօտ է բարելաւման, հէնց այս գործն էլ կազմելու է մեր կեանքի բոլոր հրատապ խնդիրների և շահերի կենդրոնակէտը: Բայց, դժբախտաբար այս կարևոր գործօնի վրա այժմ մենք այնքան էլ լուրջ ուշադրութիւն չենք դարձնում: Ես չեմ կամենում այդ մասին երկարել և առաջարկում եմ առաջին նամակիս սկիզբը կրկին աչքի անցկացնել:

Մենք շատ անգամ երբ կամենում ենք մի բարի ցանկութիւն, կուլտուրական մի գործ ներմուծել մեր կեանքի մէջ, այդպիսիները վերցնում ենք Եւրոպական քաղաքակիրթ ժողովրդի կեանքից, բայց աչքաթող ենք անում մի բան, որ չենք ուսումնասիրում այն ճանապարհը, այն միջոցները, որոնցով Եւրոպացիք հասել են ներկայ կուլտուրական դրութեան: Այնտեղ կրթական-դաստիարակչական գործը դրուած է հաստատուն հիմունքների վրա, ուստի և կեանքի մէջ ցոյց է տալիս իր բարելաւ ազդեցութիւնը:

Թէ Եւրոպայում ի՞նչ յամառութեամբ ուսուցիչները նուիրւում էին ժողովրդի կրթական-դաստիարակչական գործին, դրա սիրուն և ուսանելի օրինակը մենք գտնում ենք մանկավարժութեան հայր Պետալօցցու գործունէութեան մէջ:

Նրա մանկավարժական մեթոդը այն աստիճան դերազանց էր, որ այդ ձև կրթութեան ազդեցութեան տակ նայն իսկ հասարակութեան տակաւորը միանգամայն փոխուեց դէպի լաւը:

Իմ խորին համոզմամբ մեր ուսուցիչները եթէ չը հետեւեն Պետալօցցու օրինակին, եթէ յամառ համբերատարութեամբ չտօկան այն բոլոր զրկանքներին և բացասական վերաբերմունքին, որոնցով նաքա շրջապատուած են, չեն կարող իրանց ցանկալի նպատակին հասնել. ի հարկէ խօսքս քեզ նման իդէալներով ոգևորուած անհատների մասին է և ոչ հացի համար աշխատողների: Այդ պատճառով ես կամենում եմ քեզ պատմել Պետալօցցու կեանքից մի դէպք, որ խիստ ուսանելի է և քեզ կարող է օրի-

նակ ծառայել և դուրսի գէպի անդուլ աշխատանք առանց յուսահատուելու առօրեայ անյաջողութիւններից։

Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ երբ Նապոլէօն I-ինը կառավարութեան ղեկն իր ձեռքն առաւ, գիտես, որ ձգտեց աշխարհակալութեան և նրա առաջին զօհներից մինը եղաւ Շվեյցարիան — Պետտալօցցոյ հայրենիքը։ Ունտեր Վալդէն Կանտօնը, որ ամենից շատ էր տուժել, որք և անտէր երեխաներ մնացել էին դուրսը, իսկ ժողովուրդը չափազանց աղքատ էր։ Շվեյցարական կառավարութիւնը Պետտալօցցուն հրաւիրում է Ստանց քաղաքը և նրա խնամքին է յանձնում անտուն և թափառական երեխաների խնամատարութիւնն ու կրթութիւնը։ Շատ ողբալի պայմաններում յանձն առաւ Պետտալօցցին այդ պաշտօնը։ Քաղաքի մօտ գտնուում էր հնուց մնացած մի կուսանոց, որի խոնաւ և մութ սենեակները միանգամայն անյարմար էին բնակութեան համար։ Բայց քաղաքացիք այդ շէնքը տուեցին բնակութեան համար։ Ապաստարանի համար նշանակած գումարն այնքան չնչին էր, որ նոյն իսկ զուրկ էին մնում երեխաները ամենանհրաժեշտ կարիքներից։ Պետտալօցցին հտրկադրուած էր լինել ապաստարանի և տեսուչ, և՛ ուսուցիչ, և՛ դաստիարակ և՛ վերակացու և՛ տնտես, և՛ խոհարար և մինչև անգամ ծառայ։

Իսկ նրա սաները՝ կեղտոտ, սղլոտ, պատառոտուած հագուստով, վարակուած հիւանդութիւններով, վտիտ, բարոյապէս փչացած, նոքա որևէ դաստիարակութիւն չէին ստացել, բացի փողոցային այն բացասական յատկութիւնները, որ իւրացրել էին մինչև ապաստարան մտնելը։ Պետտալօցցին պիտի կառավարէր այսպիսի կարգապահութիւնից հասկացողութիւն չունեցող 100-ից աւելի երեխաների։ Նօրա չափազանց անմաքրասէս էին, չգիտէին իրանց պահել և նրանց մէջ զարգացած էին շատ վատ բնազդներ։ Աւելացրու սրանց վրա և նրանց ծնողների ու ազգականների վարք ու բարքի ապականութիւնը։ Դրանք քաղաքի տակաւններն էին։ Սրանց աչքում ապաստարանը մի անմտութիւն էր, իսկ Պետտալօցցուն համարում էին մի խեղճ

մարդ, որ ուրիշ գործ չկարողանալով կատարել, եկել է իրանց երեխաներին ծառայելու։ Լինում էին այնպիսի ծնողներ, որոնք իրանց երեխաներին բերում էին ապաստարան, թողնում էին այնտեղ մինչև այն ժամանակ, երբ նոր հագուստ էին ստանում, ապա առանց խղճահարուելու դուրս էին տանում, իբր ոչինչ չի պատահել։ Պատահում էին և այնպիսի ծնողներ, որ Պետալօցցուց վարձ էին պահանջում, որովհետև ասում էին, իրանց երեխաները եթէ ապաստարանում չլինեն, մուրացկանութեամբ իրանց համար փող կաշխատեն,

Մի անմիտ և չմտածուած քայլ էր արածս, գրում է Պետալօցցին Ստանցում իր գործունէութեան մասին, գիտցողը գուցէ չանէր այդ քայլը, բայց բարեբաղդաբար ես կոյր և միամիտ էի, ես չգիտէի թէ ինչ եմ անում, բայց գիտէի թէ ինչ եմ կամենում անել, իսկ այդ ինձ համար նշանակում էր—կամ մեռնել, կամ նպատակի հասնել... մի րոպէ անգամ չէի մտածում, որ կեանք եմ սկսում Ալպերի բարձունքներում առանց, ինչպէս ասում են, ջուր ու կրակ ունենալու,

Եւ Պետալօցցին հասաւ իր նպատակին, որին ձրգտում էր։ Մի տարուց յետոյ չէր կարելի ճանաչել ապաստարանի երեխաներին, այնպէս նոքա փոխուել էին—դարձել էին համեստ, մաքրասէր, աշխատասէր։ Նրանք չափազանց սիրում էին իրանց հօրը—Պետալօցցուն և ամեն բանում նրա պաշտպանն ու աշխատակիցն էին։ Երեխաները արդէն հասկացել էին ամեն բան և կապուել էին թէ ապաստարանի և թէ Պետալօցցու հետ։ Իրանց բնակարանը, չնայելով անյարմարութիւններին, աշխատում էին կարգի բերել։ Այս բոլորը տեսնելով, երեխաների ծնողների վերաբերմունքն էլ փոխուեց, այն մարդիկ, որոնք առաջ գաղտնի և յայտնի դրդում էին երեխաներին ապստամբել Պետալօցցու դէմ, այժմ գալիս էին ապաստարան համբուրում էին նրա ձեռքը և յայտնում իրանց երախտագիտութիւնը։

Ահա իսկական դաստիարակութիւնը։ Բայց ինչպէս

հասաւ Պետալօցցին այդ բանին, ահա թէ ինքն ինչ է պատմում. «Ես մենակ էի երեխաների հետ, թէև մի կողմից այդպիսի անօգնական դրութիւնը ինձ շատ թանկ նստեց, բայց միւս կողմից շատ օգտակար էր իմ նպատակներին հասնելու համար. Սաները ամբողջ օրն ինձ էին տեսնում՝ իրանց մէջ, նրանց թէ հոգու և թէ մարմնի համար ամեն բարիք ինձանից էր բղխում. ես էի նրանց օգնում, ես էի սովորեցնում, ես էի նրանց զրուցաընկերը։ Նրանց հայեացքը միշտ դէպի ինձ էր ուղղուած, նրանց ձեռքերը իմ ձեռքն էին բռնում, եւ օգնութեան կամ պաշտպանութեան կարիք էին ունենում։ Իմ արտասուքը խառնում էր նրանցի հետ, երբ նրանք լաց էին լինում, նրանց ծիծաղին յաջորդում էր իմ ժպիտը, երբ նրանք ուրախ էին, նրանք անջատուած էին աշխարհից, նոյն իսկ Ստանցից։ Նրանք միմիայն ինձ հետ էին և ես՝ նրանց, ինչ նրանք էին ուտում, նոյնն էլ ես էի ուտում, ինչ նրանք էին խմում, նոյնը և ես. ես աւելի ոչինչ չունէի, ոչ առանձին ինձ համար հագացող, ոչ ծառաներ և ոչ էլ բարեկամները։ Միմիայն երեխաներն էին իմ ունեցածս. երբ նրանք առողջ էին, ես նրանց մէջ էի, երբ մէկնումէկը հիւանդանում էր, ես նստում էի նրա մահճակալի մօտ։ Ես քնում էի նրանց հետ, պառկում էի այն ժամանակ, երբ նրանք բոլորն էլ քնած էին լինում և զարթնում էի նրանցից վաղ։ Մենք աղօթում էինք միասին, իսկ երբ պառկում էին, ես նրանց համար պատմութիւններ էի անում, որ թէ դքսանք էր նրանց համար և թէ ուտում։ Այդպէս էին նրանք ցանկանում և ես կատարում էի այդ բարի ցանկութիւնը. ես հոգս էի քաշում հեռու պահել նրանց անմաքրութիւնից, որ յատուկ է աղքատութեան և երեխաները շուտով սկսեցին գնահատել այն ամենը, ինչ որ ես անում էի նրանց համար։ Իմ ամենալաւ պաշտպաններն էին այդ խեղճ ու արհամարհուած երեխաները երբ ուրիշները թշնամաբար էին վերաբերում դէպի ինձ։ Նրանք կարծես զգում էին այն բոլոր անիրաւութիւնները, որ ուրիշները պատճառում էին ինձ և կարծես աւելի ու

աւելի սերտանում է մեր յարաբերութիւնը: Եւ դաստիարակչական որ եւ է մեթոդ, սխառմ չունէի, բացի այն, որ սիրում էի այդ արարածներին և հաւատում էի, որ իմ դէպի նրանք տաժած սրտագին, անկերծ սէրը կփոխի նրանց դէպի լաւը այնպէս արագ, ինչպէս գարնանային արևը փոխում է երկրի մակերևոյթը, որ ցրտաշունչ եղանակի շնորհիւ սառել, պաղել էր»:

Պետալօցցին ունենալով դէպի երեխաները ջերմ և սրտագին սէր, որով նուաճել էր նրանց մի ժամանակ կուպիտ, իսկ այժմ փափկած սրտերը, չէր կարող անտես անել այդ մանուկների անձնաւորութիւնը. նրա համար օտար էին հրամայող, պահանջող միջոցներն, ընդհակառակը, միշտ և ամեն դէպքում նա դիմում էր իր սանիկների խելամառութեան, նրանց բարոյական արժանիքին ու պատուին, աշխատելով նրանց բացատրել իր պահանջների ամեն մի հիմունքը: Այսպէս ղեկավարուելով նա զարգացնում էր իր սանիկների մէջ բարոյական գիտակցութիւն և պարտաւորութեան գգացմունք:

Թէ ինչ աստիճանի նա յարգանքով էր վերաբերւում դէպի իր սաների անձնաւորութիւնը, դրան ապացոյց կարող է ծառայել հետեւեալ փաստը.—Պրանս-Աւստրիական պատերազմի ժամանակ աւերուեցաւ Շվեյցարական Այլտդօրֆ գիւղը: Պետալօցցին շատ վշտացած էր այդ դժբաղդներին պատահածով, մանաւանդ մտահոգութիւն էր պատճառում նրան անտէր մնացած երեխաների վիճակը. նա ուզում էր օգնել նրանց, բայց գիտէր, որ միջոցները չեն ներում: Այս խնդիրը դրեց իր սանիկների վճռահատութեան. նա պատմեց Այլտդօրֆին պատահած դժբաղդութիւնը և աւելացրեց, երևի այնտեղ կործանուած գիւղում թափառում են հարիւրաւոր անտուն անտէր երեխաներ, քաղցած, մերկ... Չէիք կամենալ խնդրել իշխանութեանը, որ նրանց տեղ տայ մեր տան մէջ:

—Կամենում ենք, կամենում: ասացին նրանք միաս բերան:

—Բայց առանց այն էլ մեր միջոցները շատ սուղ են,

մեզ չեն բաւականացնում, ասում է Պետալօցցին. այդ խեղճերի համար դուք ստիպուած կլինէք շատ աշխատել, քիչ ուտել, նոյն իսկ ստիպուած կլինէք ձեր շորերից էլ բաժին հանել նրանց համար: Կամենսկում էք ինչ էլ որ լինի օգնել այդ դժբաղդներին:

— Նրանք բոլորն էլ թող գան այստեղ, միասին պատասխանեցին երեսւաները, մենք համաձայն ենք շատ աշխատել, քիչ ուտել:

Եւ յիրաւի, երբ այդ թշուառներին բերին, նրանք շատ մտերմաբար ընդունեցին, հագցրին նրանց իրանց շորերը, բաժին տուին իրանց անկողիններից և առհասարակ հոգում և խնամում էին նրանց կատարեալ գիտակցութեամբ:

Պետալօցցին բացի սիրուց և յարգանքից դէպի իր սաները, ունէր և մի այլ դաստիարակչական մեթոդ, որ դժբաղդաբար մեր այժմեան դպրոցներում չի գործադրուում: Նա մեծ նշանակութիւն էր տալիս մտերմական զրուցատրութեան և ամեն անգամ առթից օգտուելով խրատում և ուսուցանում էր նոյա լինել բարի, մտածել ընդհանուրի մասին, գիտակցել իրանց դերը հասարակութեան մէջ և լինել օգտակար անգամ հասարակութեան և սանիկները այս բոլոր խրատների մարմնացումն տեսնում էին Պետալօցցու մէջ և օրինակ առնում նրանից:

Պետալօցցին միանգամայն դէմ էր ձևական, սխալաստիկական կրթութեան. նա միշտ կրկնում էր. «ոչ թէ արուեստը, ոչ թէ գիրքը, այլ կեանքը պիտի լինի հիմք ամեն մի դաստիարակութեան, ամեն մի կրթութեան»: Իսկ դաստիարակութեան համար իբրև ամենազօրեղ միջոցներից մինը նա համարում էր աշխատանքը: Նա ոչ մի արուեստական միջոցի չէր գիմում իր սաներին աշխատեցնելու համար, այլ իր սեպհական օրինակով դրդում էր նրանց իրանց ուժերի համեմատ աշխատել և լրացնել իրանց պէտքերը: Նրանք իրանք էին իրանց կերակուրը պատրաստում, կարկատում էին իրանց հագուստները, վայտ ջարդում, վառարանը վառում, ջուր բերում, սենեակները

մաքրում, բնակարանի վիճակները նորոգում, մի խօսքով անում էին այն ամենը, ինչ որ հարկաւոր էր համարնակութեան համար: Ի նկատի ունենալով, որ տղայքը տեսնում էին իրանց արածի օգտակարութիւնը, էլ աւելի եռանդով էին աշխատում: Այս աշխատանքները նրանք տեսնում էին սիրով, ուրախ և յարգանքով էին վերաբերում դէպի աշխատանքը լիովին գիտակցելով դրա մեծ նշանակութիւնը կեանքի համար:

Այս ուղղութեամբ աշխատելը չկայ մեր դպրոցներում, մեզանում, ճիշտ է, մանկավարժական գիւրքին միջոցներ գործադրում են երեխաներին հեշտութեամբ ուսուցանելու վերաբերութեամբ, բայց դաստիարակչական կողմը չափազանց կաղում է, իսկ ֆիզիքական աշխատանքը և դրա միջոցաւ բարոյական դաստիարակութիւնը խալաւ գոյութիւն չունի. մենք մեր սաներին տալիս ենք ուսում, բաղմակողմանի գիտութիւն գրքերի միջոցաւ և դարձնում ենք եթէ կայելի է այդպէս անուանել, տէօրետիկներ, որոնք կեանքի համար միանգամայն անպէտք են և ինքնուրոյն գործի անընդունակ. նրանք դառնում են գրական աղաներ, բուրժուաներ որ գործնական կեանքի համար ոչ մի արժէք չունի:

Զինի թէ մտածես, որ ես դէմ եմ գիտութիւններին և քարոզում եմ միայն տարրական կրթութիւն, ոչ. բաղմակողմանի միջնակարգ կրթութիւն անհրաժեշտ է ստանալ, բայց իմ ակնարկութիւնս վերաբերում է այն բանին, որ մեր մի և երկդասեան և թէ միջնակարգ դպրոցներում տալով գիտութիւն և տարիներ ընթացքում միայն մտաւոր պարապմունքներով պարապացնելով նրանց, հասարակութեան ապագայ անգամներին կտրում ենք կեանքից, դարձնում ենք գործնական պարապմունքների համար անընդունակ:

Դու տեսնում ես, որ մեր դպրոցներում սովորողները թէև 90% գիւղացիներ են, բայց այսօր գիւղերում չունինք ինտելիգենցիա. բոլոր քիչ թէ շատ պատրաստուած մարդիկ դուրս են գալիս գիւղից և քաղաքներում

այնպիսի պարապմունքներ փնտռում, որ համապատասխանի իր ստացած կրթութեան, իսկ եթէ գրեզ է գնում, միակ առդարէզը ուսուցչութիւնն է:

Այս չարիքի արմատը ևս գտնում եմ մեր դաստիարակութեան և կրթութեան թերութեան մէջ:

Առաջին իսկ օրից երեխան դպրոց գալով ազատուում է տնային աշխատանքներին մասնակցելուց և դպրոցը դժբաղդաբար խրախուսում է այդպիսի արարքը: Մինչդեռ եթէ նրանք շարունակէին տնային աշխատանքը կատարել և դպրոցումն էլ դասերից դուրս ունենային որ և է գործ տեղի յարմարութեան համեմատ, այդպիսի խորթութիւնը կհսով չափ և աւելի կպակասէր:

1905 թուին Տիփլիսում յատուկ յանձնաժողովի ձեռքով դպրոցական մի ծրագիր մշակուեց մեր դպրոցների համար. այդ ծրագիրը մի նորամուծութիւն ունէր, որ տեսականապէս հետաքրքրութիւն չարժեց մեր դպրոցներով հետաքրքրուողների շրջանում, բայց ահա չորս տարի է և ոչ մի տեղ նրա գործադրութիւնը չտեսայ. խօսքս ձեռարուեստի մասին է:

Մինչև այժմ՝ այդ մասին նոյն իսկ մի շօշափելի, պարզ գաղափար էլ չտուեցին, որպէսզի մեր դպրոցական անփորձ ուսուցիչները կարողանային ղեկավարուել և ծրագրի այդ մասը մնաց մեռած տառ մինչև այժմ:

Ինձ թւում է, սիրելիս, որ բոլոր դպրոցներում նման ձեռարուեստ մտցնելը ոչ մի դրական օգուտ չի տալ ոչ դաստիարակչական և ոչ գործնական տեսակէտից, նա վերջ ի վերջոյ կդառնայ պարտադիր և երեխաների համար ակամայ սովորելու առարկայ. իսկ երբ այդպիսի դարձաւ, այլևս օգուտ սպասել նրանից չի կարելի: Ձեռարուեստի նպատակը երկու է. նախ՝ դաստիարակչական և երկրորդ՝ մանուկներին ընտելացնել ֆիզիքական աշխատանքի:

Երկու դէպքումն էլ ձեռարուեստը պիտի լինի ազատ ընտրութեամբ և տեղական պայմաններին համապատասխան, այլապէս նա կկորցնի իր իսկական նշանակութիւնը, Գանի որ ձեռարուեստի մասին դեռ մշակուած և

պարզաբանած ձեռնարկ չունենք, ես մնում եմ այն կարծիքին, որ դու, և քեզ նման գիւղական ուսուցիչները անպատճառ պէտք է հետաքրքրուեն գիւղական աշխատանքներով, մեր գիւղական դպրոցները ընդարձակ տարածութիւններ չունեն, որ երեխաները ընտելանան դպրոցում երկրագործական պարագամունքներին, ուրեմն մնում է դարնան բացուելուն պէս աշակերտների հետ դաշտ դուրս գալ և այնտեղ թէ գիւղական աշխատանքները դիտել և թէ մասնակցել նրանց աշխատանքներին: Երբէք չը խորշել դպրոցական անհրաժեշտ աշխատանքները, անել տալ երեխաներին, թող նրանք սրբեն, մաքրեն դասարանները, իրանք իրանց համար ջուր բերեն, վառարանը վառեն և այլն և այլն, սրանով նրանք կսովորեն մէկն ամենքի և ամենքը մէկի համար աշխատելու սկզբունքին և հէնց այդպիսի աշխատանքների ժամանակ է, որ երեխաները կսովորեն հասարակական համայնական գործողութեան և կապուած մնալով իրանց հողուջրին նրանք չեն խորթանալ և դպրոցը վերջացնելուց յետոյ էլ կմնան գիւղում և իբրև աւելի խելօքներ կբարեկարգեն իրանց տնտեսութիւնը:

Պետտալօցցու հայրենիք Շվեցարիան 200 տարի առաջ մեր երկրից աւելի խոսպան և ժողովուրդը աւելի բիրտ էր, իսկ այսօր սքանչացումն է պատճառում ամեն այցելուի, պատճառն այն է, որ նրանք չեն բաւականացել տնտեսական գիտութիւններով, այլ տուել են երեխաներին և գործնական ուսում, որով իրանց տնտեսական դրութիւնը այն աստիճան են բարուօքել, որ ամենայետին գիւղն անգամ՝ չգիտէ չքաւորութիւնն ինչ բան է:

Արդ, մի սպասիր մի քանի ամսում հրաշքներ գործել տարիների շարունակ կաց միևնոյն տեղում, գործիր Պետտալօցցու նման և աշխատանացդ պտուղը կվայելեա: Ես յաջորդ նամակովս կգրեմ քեզ թէ յարատե որոշ ուղղութեամբ դպրոցական կրթութիւնը ի՞նչ մեծ բարիք է հասցրել Ֆինլանդիային:

Յգրութիւն:

20 Յունիսի

Քո Գալսկիճ Ուսուցիչ: